




2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՆԻ ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ*

Վրա է հասնում փոթորկոտ ապրիլի 7-ը: Ջեղեթն իր ռազմական պատրաստությունները տեսնելուց հետո, ապրիլի 7/20-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 6-ին, հրամայում է թուրքական զինված խմբերին ռազմական կարգով, զգուշությամբ առաջ շարժվել ու մոտենալ հայերի դիրքերին: Թշնամին աշխատում էր առաջին հերթին իր ձեռքը վերցնել Ուրբաթ-առվի մոտ գտնվող Կլոր-թեփե դիրքը, որ հսկում էր Շուշանց գյուղի ու Վարազի վանքի և լեռան ճանապարհի վրա: Դա այն ժամանակն էր, երբ Շուշանց գյուղից որոշ թվով կանայք ու երեխաներ գալիս էին դեպի Այգեհատան: Թուրքական զինվորները հարձակվում են նրանց վրա, թալանում ու բռնաբարման փորձեր անում, Ավոյի դարի հայ դիրքապահներից Եղիա Նախշոյանը և Հակոբ Դյուրզյանը օգնության են հասնում լեղապատառ եղած հայ կանանց: Սկզբում տեղի են ունենում հատուկենտ կրակոցներ, բայց շուտով թուրքերի կողմից փոխվում է ընդհանուր համազարկի, որով շղթայազերծվում է կոիվը Ուրբաթ-առվի կողմից, որին անհամբեր սպասում էին երկու կողմերը: Հայ երկու զինվորներ, որոնք միջամտում են գործին, սպանվում են,

ապա հայ դիրքապահները բաց դաշտի վրա պաշտպանվելու համար, ստիպված են լինում թուրքական զորքերի համազարկին պատասխանել համազարկով, թշնամին մեկ զոհ տալով փախչում է, իսկ հայ կանայք ու երեխաներ ազատվում են ու մտնում քաղաք:

Ուրբաթ-առվի դեպքը դառնում է կովի ազդանշան, պոռթկում է դարերի կուտակված ցասումը և Վան քաղաքը բաժանվում է երկու հակառակորդ բանակի: Ջեղեթ բեյը գործի է դնում թնդանոթներու Մանր ժամեր էին ապրում Շահբենտեբյանի, Սահակ բեյի, Թովմազյանի և Արարբի դիրքերը: Հայերը իրենց 79 դիրքերից անխնա կրակ են բացում թուրքական երեք մեծ զորանոցների և 30 դիրքերի վրա: Այսպես, Ուրբաթ-առվի դեպքից երեք ժամ հետո Այգեհատանը վերածվում է հրաշեկ օղակի, որի մեջ զենք էր բարձրացրել ու կռվում դարավոր ստրուկն իր գոյությունը պահպանելու համար: Դրանով էլ սկսվում է Վանի ապրիլյան անկրկնելի հերոսամարտը 1915 թվականի ապրիլի 7/20-ին: Թուրքերն իրենց բոլոր ուժերը մեղտեղ բերելով, աշխատում էին 24 ժամվա մեջ բնաջնջել Վանի հայությունը: Բայց նրանք իրենց հաշիվների մեջ սխալվում են, Վանի հայությունը մի մարդու պես նետվում է պայքարի մեջ ու մնում կանգուն: Օննիկ Մխիթարյանը, վերլուծելով Վանի ապրիլյան

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № Բ-Գ-Դ-ից:

կոիվները, դիտավորյալ կերպով ամեն ինչ վերագրում է Արամին⁵, այնինչ նա այդ կոիվների ընթացքում երկրորդական դեր է խաղում, նրանից շատ ավելի մեծ դեր են խաղում Արմենակ Եկարյանը և Վանի երիտասարդությունը, որոնք իրենց ձեռքն են վերցնում ինքնապաշտպանության գործը: Կովի առաջին իսկ օրից, ամրաշեն բանվորները, փարձառու Շավարշ Հովիվյանի ղեկավարությամբ, գործի են անցնում և օգնում կովողներին: Ապրիլի 7-ի ժամը 9-ին կովի է սկսում նաև քաղաքամեջում:

Ապրիլի 7-ի և 8-ի գիշերը շատ խիստ խավար էր, սարսափելի սև ու ծանր գիշեր: Բերդից գործում էին հին տեսակի ծանր թնդանոթներ: Դժվար է նկարագրել կովի առաջին օրը և գիշերը: Զինմամբինը սպասում էր լուրերի, թե ո՞ր դիրքն է ընկնում և ո՞ր դիրքից են օգնություն խնդրում: Մի պահ խուճապ է տիրում հայկական համարյա բոլոր թաղերում: Շուտով հանդես է գալիս վարժապետանոցի նվագախումբը և «Մեր հայրենիք» երգելով դրդեցնում է փողոցներն ու փոխում ժողովրդի տրամադրությունը: Այդ նվագախմբի թափորի մեջ էր նաև ուսուցիչ ալեհեր Հովհաննես Կուլօղլյանը (Մկրտչյանը), որ բարձր ձայնով կանչում էր. «Վանի ժողովուրդ, կուսակցական և անկուսակցական, հարուստ թե աղքատ, երիտասարդ թե ծերունի, կին թե տղամարդ, մեկ սրտով, մեկ մտայնությամբ, կովի՞ք դարավոր թշնամու դեմ մինչև վերջին շունչը»⁶: Նա միաժամանակ ոգևորում էր ժողովրդին ու հատկապես երիտասարդությունը հայ անցյալ հերոսների ու 1896 թվականի Բարթոլոմեոսի վանքի շրջանում նահատակների սխրագործություններով:

Այնուհետև նվագախումբը մեկնում է Սահակ բեյի դիրքը և անմիջապես նվագում Միքայել Նալբանդյանի «Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մի անգամ պիտ մեռնի, Բայց երանի, որ յուր ազգի ազատության կոհնի» անմահ երգի տողերը և ոգևորում է կովողներին, ժողովրդին: Ժողովրդից շատերը, գինու շշերը վերցրած, մտնում են դիրքերը, կովողներին ոգևորում: Այսպես են անցնում կովի առաջին օրը և առաջին գիշերը:

Վանի ապրիլյան կոիվներին մեծ դեր է խաղում նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Նա ծանոթ է բոլոր վանեցիներին, հին արմենական, ահաբեկիչ է եղել 22 տարի: Վանից դուրս գալուց հետո զբաղվում է նկարչու-

թյամբ, թողնելով քաղաքական-հասարակական աշխատանքը: 1908 թվականին, Թուրքիայի սահմանադրությունից հետո, գնում է Պոլիս, ապա պատերազմի նախօրյակին վերադառնում է Վան և ապրիլյան դշտամարտը ստիպված նորից դիմավորում է հրացանը գրկելով: Կովի հենց սկզբի օրից, որպես զինմամբնի խորհրդականներից մեկը, անցնում է դիրքերը և ամեն տեղ խանդավառում է շրջապատը: Ապա կովի հաջորդ օրը շտաբ է մտնում ուրախ տրամադրությամբ, ինչպես միշտ, կուրծքը զարդարված փամփշտակալներով, ձեռքին ուներ մոտեւ հրացան: Նրան դիմելով Եկարյանն ասում է. «Սահակ բեյի դիրքերից մի քանիսը նեղվում են թուրքերից»: «Այդ կողմի բոլոր դիրքերը պատեցա,— ասում է նկարիչը,— տղոց տրամադրությունը շատ լավ է. եթե գործը այդպես ընթանա, թուրքերը բան մի պիտի չկրնան ընել, միայն դուռն ինձի ըսե, թե բավականաչափ փամփուշտ ունի՞նք»⁷: Եվ այսպես, տաղանդավոր նկարիչը, կովի ամբողջ ընթացքում, մշտապես շրջում է դիրքերը և իր դիպուկ նշանադրությամբ խրախուսում կովողներին: Նրան անվանում էին «նշանձի» Փանոս և դիրքերում կովող հերոս տաղաները հաճախ իրենց մոտ էին կանչում, որ նա իր դիպուկ կրակով լուծի վանի մատնի թշնամու մահացու կրակոցը:

Այնուհետև զինմամբինը մի քանի թուրքիկներ է օղային փամփուշտների միջոցով նետում թուրքական թաղերի վրա, որոնց մեջ գրում է. «Թուրքե՛ր, մենք զրացի ժողովուրդներ ենք, իրարու դեմ թշնամություն մը չունինք, հիշեցեք, թե քանի մը ամիս առաջ, երբ ռուսներ միշտ Սարայ հասան, ի՞նչ վիճակի մեջ էիք, մենք բարեկամական վերաբերում ցուցուցինք ձեզի. կրնայինք շատ բան ընել, բայց չըրինք, երբ կառավարությունը մի քանի ուստիկան միայն ուներ: Հիշեցեք, թե այդ օրերուն, մենք իրարու խոսք տվինք խաղաղությամբ ապրելու: Ահա՛նք մի՛ դնեք Ձեզեթի հայրենադավ խոսքերուն»⁸: Շտաբը մի կոշ էլ ուղղում է հայ զինվորներին, ուր ասված է. «Ռազմիկ ընկերներ, պզտիկ հաջողություն մը թող չհեկերներ, ազգիկ հաջողություն մը թող չհեկերներ, ձեզ խոհեմութենե, ամեն բանին վերջն է գովելի, մեր թշնամին ուժով է և խորամանկ, ձեր անվեհերության միացուցեք զգուշություն և խոհեմություն: Մի՛ հայհոյեք թշնամիի կրոնքին»⁹:

7 Արմենակ Եկարյան, «Հուշեր», էջ 199:

8 Նույն տեղում, էջ 199 և «Հայրենիք» ամսագիր, 1924 սեպտեմբեր, № 11, էջ 78:

9 Արմենակ Եկարյան, «Հուշեր», էջ 199:

5 «Հայրենիք ամսագիր», 1924 սեպտեմբեր, № 11, էջ 78:

6 Արտակ Դարբինյան, «Հուշեր», էջ 271:

Այս երկու մեջբերումներն էլ խելոք ու մտածված քաղաքականության բնույթի կոչ էին, որոնք որոշ դեր են խաղում երկու կողմերի համար, մի կողմից թուլացնում են թուրք ժողովրդի գրգռվածությունը և մյուս կողմից ավելի են ոգևորում հայ մարտիկներին, նրանց դարձնում ավելի աշալուրջ ու կարգապահ:

Ուժեղ ռմբակոծության հետևանքով, հրդեհվում են հայերի արևմտյան շրջանի տները, Կարմիր Մորուքյանի տունն իր ունեցվածքով, բայց թուրքերն այս դիրքը չեն կարողանում գրավել: Կարմիր Մորուքյանի տան հրդեհի ժամանակ այրվում ու ոչնչանում է նաև այդ տանն ապրող թուրքական հրամանատար և Վանի զինվորական ատյանի նախագահ Հյուսնի բեյի ունեցվածքը: Սա խաղաղասեր, լուսավոր ու ողջամիտ մարդ էր և դեմ էր կուսակալի ու կառավարության ոճրագործ քաղաքականությանը: Նա առիթներ բաց չէր թողնում զսպելու Զեղեթի ոճրագործությունները: Հյուսնի բեյը գիտեր, որ Զեղեթը պիտի կոտորի հայերին, այնուամենայնիվ հայկական թաղից չի հեռանում և միայն կոիվներն սկսվելուց մի քանի օր առաջ իր կնոջ ու աղջկա հետ ապաստանում է իտալական ներկայացուցիչ Սփորտոնի տունը: Չնայած Զեղեթի պահանջներին ու սպառնալիքներին, նա իր հայասեր ընթացքն ու քաղաքականությունը չի փոխում և մինչև վերջ էլ հարգում է հայ ժողովրդին: Նման դեմքեր հազվագյուտ էին թուրքերի մեջ, նա մի բացառիկ անձնավորություն էր: Առաջին օրվա ու գիշերվա կոիվները ցույց են տալիս, որ ոճրագործ Զեղեթն իր հայաչինջ ծրագիրը շուտով չի կարողանում կենսագործել: Թուրքները տալիս էին մեծ զոհեր, հայերի ոգևորությունը բարձր էր: Ժողովուրդն ամրապնդվում էր, իսկ հայերի ինքնապաշտպանությունը բռնում էր իր քննությունը:

Անգլիական հյուպատոսարանի շենքում, հայերի անհեռատեսության հետևանքով, թուրքերը 70 զինվոր էին տեղավորել, որոնք մեծ վնաս էին հասցնում հայերին: Այդ շենքը գտնվում էր հայկական պաշտպանության գծի մեջ: Զինամարմինը որոշում է հրդեհել այդ շենքը: Ապրիլի 8-ի երեկոյան, 14 տարեկան մի տղա, նավթի մեջ թաթախված մի վերմակի մեջ փաթաթված, տեղատարափ գնդակների տակ, մոտենում է շենքին, լուղով օժտված ու մուսամուտները, ապա վառում նավթոտ վերմակը, գցում դռան մոտ ու վերադառնում իր տեղը: Շենքն սկսում է վառվել, թուրքական զինվորները չեն կարող դնից դուրս գալ, ստիպված վերի հարկից վար են

նետվում ու ջարդվում, իսկ ողջ մնացածներն ու նրանց օգնության եկածները խմբապետ Նշանի խմբի կրակի տակ են ընկնում: Թուրքական զինվորները 20 սպանված տալով փախչում և աղապում են, իսկ շենքն այրվում է և հայերի ձեռքն ընկնում է որոշ քանակի ռազմավար: Փոքրիկ հրձիգը շատից ստանում է մի ոսկի պարգև և «պատվո նշան»: Զինամարմինը արժաթից հիմնել էր «պատվո մեդալ»-ներ «հայ հեղափոխություն» մականգրությամբ, բացառիկ քաջություն ցույց տվողներին պարգևատրելու համար: Նույն օրը պարգևատրվում են նաև Ալես Պարսամյանը, Մելիքսեթ էյնաթյանը և ուրիշներ: Թուրքերի սկսած երկրորդ օրվա կոիվը նորից վերջանում է հայերի հաղթանակով:

Ապրիլի 9-ին կոիվները նույն թափով շարունակվում են: Հայերը գրավում են թուրքական մի դիրք և ձեռք բերում զգալի քանակությամբ ռազմամթերք: Հանկուսներից ու Համուզ աղայի զորանոցից թուրքերն սկսում են նեղել հայերին, վտանգը կանխելու համար զինամարմինը որոշում է պայթեցնել այդ զորանոցը: Հայ քանթաններ խրամատ են փորում մինչև շենքի ներքև, ապա պայթուցիկ մեքենան դնում զորանոցի տակ և երեկոյան ժամը 11-ին վառում պատրույգը, 10 րոպեից հետո զինամիտը պայթում է ու շենքը ցնցվում, բայց չի քանդվում, որովհետև զինամիտի ուժը թույլ էր, զորանոցը ամուր էր կառուցվել: Բայց նկատում են, որ գիշերվա ժամը 3-ին զորանոցը այրվում է, որովհետև պայթող զինամիտը այրում է շենքի ներքևի տախտակամածը: Այսպիսով, ապրիլի 10-ի առավոտյան, Համուզ աղայի զորանոցը վերածվում է մոխրակույտի, իսկ զորքը, օգտվելով մթությունից, բավական զոհեր տալով փախչում է Թոփրակ-կալի, թողնելով մեծ քանակությամբ ուտելիք ու ռազմամթերք: Ապրիլի 10-ի առավոտյան ոչնչացվում են նաև զորանոցին կից թուրքական երեք տուն-դիրքերը, հայերի ձեռքը ընկնում է մեծ քանակությամբ ուտելիք և ռազմամթերք: Այրվում է արյունարբու Համիդի զորանոցը, լույս է տեսնում տեղեկատու բյուրոյի հերթական բյուլետենը և ազդարարում ժողովրդին զորանոցի այրման մասին¹⁰, իսկ նվազախումբը շրջում է փողոցներով, խրախուսելու և ոգևորելու ժողովրդին: Թուրքերը թողնում են նաև Շահ-պենտերյանի դիրքը հայերին, որ մի օր առաջ գրավել էին: Այսպիսով, ապրիլի 9-ի և 10-ի

¹⁰ «Հայրենիք ամսագիր», 1924 հունվար, № 12, էջ 40—41:

առավոտյան կոիվները նորից վերջանում են հայերի հաղթանակով: Անգլիական հյուպատոսարանի շենքի և Համուդ աղայի գորանոցի և նրան կից երեք դիրքերի տարածումով, թուրքերը համոզվում են, որ հեշտ կերպով չեն կարող գրավել հայերի ինքնապաշտպանության գիծը Այգեստանում, ինչպես այդ անում էին զավառներում: Զեղեթը դիմում է բանակցությունների և զավաղությունների միջոցով հաղթել, բայց նրա բանակցությունները արդյունքի չեն հասնում:

Ապրիլի 10-ին շարունակվում են ուժեղ կոիվները, թնդանոթների հարվածներից բանդվում են հայերի շատ տներ ու դիրքեր, բայց ամրաշեն բանվորները անմիջապես վերաշինում են դիրքերն ավելի ամուր, բան կային: Ապա կազմվում են հատուկ մասնաճեստ խմբեր հրկիզումների համար: Ապրիլի 10-ի կոիվները նույնպես վերջանում են հայերի հաղթանակով, թշնամին մեծ վնաս է կրում: Իսկ ապրիլի 11-ի կոիվները թույլ էին:

Ապրիլի 12—16-ի կոիվները գերազանցապես ընթանում էին հրկիզումներով և հայերի հաղթանակներով: Այդ օրերի կոիվներն անհամեմատ մեղմ էին: Զինամամինը ապրիլի 16-ին, կոիվների տասնօրյակի առիթով, բաց է թողնում մի թուղցիկ, որով կոչ է անում վանեցիներին, որ հերոսաբար կովեն դարավոր թշնամու դեմ և չընկճվեն նրա հարվածների տակ¹¹: Իսկ կովի հենց սկզբից զինամամինը մտահոգվում է վառողի ու փամփուշտների մասին: Նախ հրահանգում է խնայողաբար վերաբերվել գնդակների հետ, ապա հիմնում է սկզբում ծխավոր, հետո անծուխ վառող պատրաստելու արհեստանոցներ և մի մեծ արհեստանոց էլ փամփուշտներ պատրաստելու համար: Այս արհեստանոցներն են հավաքվում մեծ թվով վարպետներ՝ ոսկերիչներ, փորագրիչներ, յալդուզիներ (ոսկեզօծողներ), մեքենագործներ, ուսուցիչներ և այլ մտավորականներ: Ածուխից անծուխ վառող է պատրաստում Վանի վարժապետանոցի տնօրեն պրոֆ. Միքայել Մինասյանը, որին օգնում էին վարդան Պապիկյանը, Հարություն Կաբավյանը և ուրիշ վարպետ արհեստավորներ: Վառող և գնդակ պատրաստելու արհեստանոցներում աշխատում էին ավելի քան 50 արհեստավորներ և ամեն երեկո պարաված պարկուճները դիրքերից հավաքում, բերում ու թափում էին արհեստանոցները, վարպետները լցնում ու նորից ուղարկում էին դիրքեր:

բեր: Այդ գործում առավել աչքի էին ընկնում ոսկերիչ Ոստանիկը, Արշակը, Ավետիսը, Գարեգինը և ուրիշները: Օրեր էր լինում, որ մեկ օրում 2000 փամփուշտ էին պատրաստում: Այնուհետև զինամամինը հիմնում է մեկ առանձին զինագործարան-արհեստանոց՝ զենքերը վերանորոգելու համար: Այդ զինագործարանի վարպետներ էին Մարգար Պարպիջանյանը, Պոռոպաջանը և ուրիշներ: Այս զինագործարանում պատրաստում են նաև թնդանոթ, որի կաղապարը տալիս է Գրիգոր Բուղարացին և մի շարք փորձերից հետո պատրաստում են թնդանոթ, ումը և գործածելում են ապրիլի 21-ին: Թնդանոթն ուներ ուժեղ ձայն, գնդակը՝ ումը թռչում էր բավական հեռու և պայթում: Թուրքերը, հատկապես Զեղեթը, շատ էին վախենում այդ թնդանոթից, կարծելով որ ուսներն արդեն մտել են Վան: Այդ օրը սև էր թուրքերի, բայց պայծառ էր հայերի համար:

Կովոդներն ու բանվորները կոչիկով (սուլով) ապահովելու համար, բացում են մի առանձին արհեստանոց, ուր աշխատում էին 30 արհեստավորներ: Իսկ կանանց միութունը բացում է արհեստանոց նրանց համար հագուստ պատրաստելու: Կանանց միության ղեկավարներն էին Սողոմե Զրբաշյան և Աննա Թերլեմեզյան¹²:

Այսպիսով, կովի առաջին տասնօրյակը թեև հայերի համար ծանր էր, սակայն թշնամին, որ ծրագրել էր 24 ժամվա մեջ Վանի հայությունը սրի քաշել, մատնվում է անհաջողության և թշնամին կրում է մեծ կորուստներ: Վան քաղաքը մնում է կանգուն, հայ հերոս կովոդները ձեռք են բերում փորձ, ժողովուրդը հանդարտվում է, զինամամինը իր ձեռք առած մի շարք միջոցառումների շնորհիվ ավելի է ապահովում հայերի ինքնապաշտպանության գործը: Իսկ ոճրագործ Զեղեթը վարկազուրկ է լինում ու դիմում նոր խորամանկությունների, հայերին զինաթափ անելու համար:

Զեղեթը ապրիլի 16—22-ին կրկին անգամ նամակներով դիմում է իտալական հյուպատոս Սփորտունին և հայերի տեղապահ Տ. Եղնիկ վարդապետին, պահանջում է, որ հայերն անձնատուր լինեն և ներում ստանան: Եղնիկ վարդապետը ապրիլի 21-ին հայտնում է, որ նրա առաջարկած ձևով հայերը զենքը վար դնել չեն կարող:

Ապրիլի 16-ից Վան-Այգեստանի ինքնապաշտպանության կոիվները մտնում են իրենց երկրորդ շրջանը: Այս անգամ կոիվ-

¹¹ «Հայրենիք ամսագիր», 1924 թվականներ, № 2, էջ 86:

¹² «Հայրենիք ամսագիր», 1924 թվականներ, № 2, էջ 90:

ներն ավելի լայն ծավալով են տեղի ունենում, նրանք դառնում են տեղական: Թշնամին հարձակվում է ամեն օր բոլոր ուղղութիւններով ու բոլոր դիրքերի վրա: Ամբողջ նահանգում իրենց սև գործը ավարտելուց հետո, թուրքական ու քրդական վայրագ հրոսակախմբերը լցվում են քաղաք ու հայ հերոս տղաներին պարտադրում մղելու օրհասական կոչի: Թուրքերի ուժերը գնալով ավելանում են, Բիթլիսից գալիս են օգնական նոր ուժեր թնդանոթներով ու մեծ քանակությամբ ռազմամթերքներով, իսկ Վանում եղած թուրքական զորքերն էլ մարզվում են գերմանական սպաների օգնությամբ ու ձեռք բերում կռիվում մեծ փորձ:

Թուրքերի երկրորդ տասնօրյակի հարձակումները դարձյալ սկսում են Սահակ բեյի դիրքի վրա, թուրքական 4 թնդանոթներ գիշեր ու ցերեկ սեստեմատիկ կերպով ռմբակոծում են այդ դիրքը և քանդում շինության վերին հարկը: Հայ զինվորները հերոսաբար պաշտպանում են այն: Թուրք զինվորները «սալավաթ» կանչելով գրոհում են, բայց 10-ից ավելի զոհ տալով ետ են քաշվում: Թուրքերն ստիպված նորից անցնում են թնդանոթների կրակին: Սահակ բեյի դիրքը հայերը հինգ անգամ վերականգնում են:

Ապրիլի 17-ի կռիվներն ավելի կատաղի բնույթ են ստանում: Թուրքերը նորից են հարձակվում Սահակ բեյի ու Թովմազյան դիրքերի վրա, նվազախումբը հասնում է օգնության և թշնամու գրոհը ետ է մղվում: Թնդանոթներով ռմբակոծում են Արարքի, հատկապես Դարդանեի դիրքերը և 300 զինվորներով անցնում են հարձակման, բայց հերոս Ալեան իր զինվորներով պաշտպանվում ու ետ է մղում թշնամուն: Նույն օրը, ուժեղ կռիվներ են տեղի ունենում նաև քաղաքամերձում: Ասյպիսով, ապրիլի 16—17-ի թուրքերի գրոհներն ու հարձակումները վերջանում են հայերի հաղթանակով:

Ապրիլի 18-ին թուրքերն ավելի համարձակ և անխնա են դառնում, նրանք ռմբակոծում են ոչ միայն դիրքերը, այլ փողոցներն ու հրապարակները, եկեղեցիներն ու դպրոցները, մեկ օրվա մեջ 400 պալթուցիկ ռումբ են նետում և ժողովրդից սպանվում է 10 հոգի: Ռումբերը նույնիսկ ընկնում են գերմանական ու ամերիկյան շրջանները և վնասներ պատճառում: Ահաբեկելու համար, ամբողջ գիշերը կրակում են: Ապրիլի 19-ին նույն թափով շարունակվում է կռիվը, ուժեղ կերպով ռմբակոծում են Խաչ փողոցի ռեդեբո, փլված դիրքերն անմիջապես վերաշինվում և թուրքերի գրոհները ետ են մղվում: Նույն օրը ուժեղ հարձակումներ են սկսում նաև Արար-

քի դիրքերի վրա, այդ հարձակումները նույնպես ետ են մղվում մեծ կորուստներով: Ապրիլի 17-ին թուրքերը հայերից զբաղվում են Սղկա գյուղը և այդտեղից հարձակվում են Թաղա-քյահրեզի ու Շուշանց գյուղի վրա: Թուրքերը 4 ժամ 5 թնդանոթներով ռմբակոծում են Թաղա-քյահրեզի հայկական դիրքերը: Ապա 300 քրդեր հարձակման են անցնում, բայց հանդիպելով հայ հերոս պաշտպանների կատաղի դիմադրության և մեծ վնասներ կրելով ետ են քաշվում: Ապրիլի 19-ին թուրքերն ուժեղ հարձակումներ են սկսում նաև Հանկույսների կողմի դիրքերի վրա, և երեք գծերով հարձակվում են նաև Շուշանց գյուղի վրա, բայց այն զարվել չեն կարողանում: Կուսակալը ապրիլի 19-ին իր բոլոր ուժերով հարձակման է անցնում և փորձում հաշիվը մաքրել Վան քաղաքի հայերի հետ, բայց նրա ջանքերը ձախողվում են, թուրքերը մեծ զոհեր տալով քաշվում ու մտնում են իրենց որջերը:

Ապրիլի 20—21-ին կռիվները շարունակվում են ուժեղ թափով, քանդվում են հայերի մի շարք դիրքեր, սարսափելի հրացանաձուլություն է տեղի ունենում Այգեաստանի վրա: Հրացանների կրակն լույսի տակ, Շուշանց գյուղից տեսնողները կարծում էին, որ Այգեաստանը այրվում է: Բայց թշնամու բոլոր գրոհները ամենուրեք հանդիպելով հայ մարտիկների անձնագոհ դիմադրության, 60-ից ավելի զոհեր խլելով նրանից, ստիպում են ետ քաշվել: Զեդեթի երկրորդ շաբաթվա պլանը, այսինքն Վանի գրավումը, դարձյալ ձախողվում է:

Կուսակալ Զեդեթը հուսահատվելով, իր վրեժը լուծում է բանտարկյալներից և ապրիլի 16-ին 180 հայ բանտարկյալներին կոտորում է, որոնց թվում և հնչակյան լավ տղաներին:

Ապրիլի 22—25-ին ուժեղ կռիվներ տեղի չեն ունենում, թուրքերն այդ 3—4 օրվա ընթացքում զբաղվում են իրենց ուժերի նոր դասավորումով, նոր հարձակման բնագծեր ընտրելով: Փաստորեն կռիվները մի քանի օր կանգ են առնում և հայ մարտիկները մի փոքր շունչ են քաշում ու հանգստանում: Թուրքերը ուժեր են կենտրոնացնում Սղկա գյուղի ուղղությամբ, Շուշանցը գրավելու և քաղաքը լրիվ շրջապատելու համար: Հայերն էլ իրենց ուժերը դասավորում են այդ ուղղությամբ: Թշնամին Սղկա գյուղում կենտրոնացնում է 6 000 զինվոր:

Քաղաքամերձից երկու հերոս տղաներ՝ Սալի Հարությունը և կոշկակար Գրիգոր Դաշտոյանը, ապրիլի 23-ին դուրս են գալիս և հաջողությամբ հասնում Այգեաստան ապրիլի

24-ին ու պատմում քաղաքամեջի կոիվների հաջողությունների մասին և ոգևորում այլ-զեկատանցիներին:

Այգեստանի կովի երրորդ տասնօրյակը սկսում է Շուշանց գյուղի անկումից հետո: Ձինմարմնի նախագահ Եկարյանի ցուցումով, հայերը թողնում են Դարման և Ջորավանց գյուղերը և կենտրոնանում են Կողպանց, Ս. Գրիգորի վանքը, Վարազա վանքը և Շուշանց գծի վրա: Այս մասում, բացի կովողներից, կար մոտ 10 000 բնակչություն: Կապը բաղադրի հետ պահպանվում էր Շուշանց գյուղի ճանապարհով: Զեկեթը Վանը չկարողանալով գրավել, որոշում է ջարդել Վարազի շրջանը և քաղաքի կապը կտրել դրա աշխարհի հետ: Վարազի շրջանի հայերի ուժերը բաժանվում էին երեք շրջանի: Կողպանցի ու Ս. Գրիգորի վանքի պաշտպանությունը հանձնված էր խմբապետ Հակոբ Պլնկոյանին, 50 զինված մարդով, Վարազի վանքի շրջանը պաշտպանում էր խմբապետ Թորոսը 80 մարդով, իսկ Շուշանց գյուղի պաշտպանությունը հանձնված էր Երիկն Հակոբյանին՝ 80 զինված մարդով: Առհասարակ Վարազա գծի պաշտպանության ղեկավարն էր Երիկն:

Ապրիլի 25-ին թուրքերը մեծ ուժերով և 3 թնդանոթով շարժվում են դեպի Շուշանց ու Վարազ: Ապրիլի 24-ին, անձրևներից օգտվելով, թուրքերը իրենց ուժերը տեղափոխում են Շուշանց գյուղի դիմաց եղած բլուրների վրա և հանկարծակիի բերում հայ կովող տղաներին, որոնք համարյա բոլորն էլ քնած էին, և առանց լուրջ կոիվների գրավում են գյուղը, Երիկն Հակոբյանի ապիկարության հետևանքով: Նա ինչպես լքում է Արճակը, նույն ձևով էլ թողնում է Շուշանցը: Թուրքերը ոգևորվելով գրավում են Վարազը, Կողպանց ու Ս. Գրիգորի վանքը, իսկ ժողովուրդն ու կովողները ապրիլի 26—29-ի ընթացքում մտնում են քաղաք: Քաղաքի կապը կտրվում է դրա աշխարհի հետ: Այս եղանակով ընկնում են շրջանները, մնում են կանգուն միայն Շատախն իր մի շարք գյուղերով ու Փեսան դաշտով և լեռներում եղած որոշ դիմադրական կետերով: Վերջապես ընկնում է Վարազա գիծը, Վանի հզոր ամրությունն ու հենարանը: Այնտեղի 10 000 հայեր նույնպես մտնում են քաղաք: Կանգուն է մնում Վանը, բոլորը հավաքվում են այստեղ ու կովում հերոսաբար:

Վարազի անկումից հետո Վան քաղաքի հայերի թիվը հասնում է 100 000-ի, այս

հսկա ամբոխին սպառնում էին սովը և համաճարակ հիվանդություններ, բայց քաղաքի ժողովուրդը մի մարդու պես օգնություն է հասցնում գյուղերից եկած թշվառներին, տալով ուտելիք, հագուստ, բնակարան, իսկ հիվանդներին էլ տեղավորում հիվանդանոցներում: Ամեն մի շարիք իր հերթին ծնում է նաև բարիք: Քաղաքացիները, տեսնելով գյուղացիների ծանր վիճակը, ավելի մեծ ուժով էին փարվում ինքնապաշտպանության պատվավոր գործին: Եթե քաղաքում կային որոշ թվով մարդիկ և ասում, որ եթե կառավարության հանձնվին, կարող են փրկվել, տեսնելով գյուղացիների ողբալի վիճակը, ետ են կանգնում իրենց մտքերից: Ձինմարմինը կանխում է նաև դասալքությունը, որ կազմակերպել էին Երիկն և իր տղաները:

Ապրիլի 25-ին Շուշանց—Վարազա գծի անկումով, Վան քաղաքը լրիվ կերպով առնվում է օղակի մեջ, թշնամին իր բոլոր ուժերը կենտրոնացնում է Վանի վրա և աշխատում է նոր հարվածներով խորտակել նրա ինքնապաշտպանությունը և ջարդել այնտեղ կուտակված բոլոր հայերին:

Ապրիլի 26-ին թուրքական զորքերը Թաղա-բազրեզի և Ուրբաթ—առվի ուղղությամբ հարձակվում են հայկական դիրքերի վրա, որի նպատակն էր սղմել հայերին Այգեստանի ներքին թաղերում ու նեղացնել պաշարման օղակը, բայց թուրքերի երեք գրոհներն էլ ետ են մղվում մեծ զոհերով: Նույն օրը ուժալից ընկնում են Սահակ բեյի ու Թովմադյանի դիրքերը, կոիվներ են տեղի ունենում Թուֆուլյանի դիրքի դեմ, թուրքերը ոչ մի արդյունքի չեն հասնում: Ապրիլի 27-ին կոիվներն սկսվում են Արաքի դիրքերի դեմ, երկու թնդանոթով անվերջ կրակվում են հայերի պաշտպանության դիրքերի վրա: Թշնամու գրոհները ետ են մղվում, ուժալից ընկնում են անցնում են իզուր:

Ապրիլի 28-ին Այգեստանում տեղի են ունենում ամենատեղեղ կոիվներ: Թուրքերը կովի մեջ են նետում իրենց բոլոր ուժերը, Այգեստանի հետ իրենց հաշիվը մաքրելու համար: Այն օրվա կոիվները ամենասարսափելին էին ամբողջ կոիվների ընթացքում: Թուֆուլյանի 4 թնդանոթները անվերջ հանդիմանում են Հանկույսների և Թաղա-բազրեզի հայկական ամրությունները և բանդվում են մի շարք դիրքեր, թուրքական զինվորներ «սալավաթ» մոչնդով գրոհում են քանդված դիրքերի վրա, Այգեստանի հայությունը նորից ապրում է ծանր ժամեր, շուտով Կալծակ Առաքելը և Կարապետ Դատախյանն իրենց թուղթիկ խմբերով օգնության են հասնում հայ քաջերին և ետ մղում

Յշնամու գրոհները և փրկում Այգեաստանը և կարճ ժամանակվա ընթացքում վերականգնվում քանդված դիրքերը: Ապրիլի 28-ին Զևեթը վճռել էր ընկճել հայերին և կենսագործել իր հայաջինջ ծրագիրը Վան քաղաքում: Բայց այդ օրվա ահավոր կոփվները վերջանում են երկուստեք մեծ զոհերով, թուրքերը տալիս են 100 սպանված և մեծ թվով վիրավորներ, մոտ 20-ի շափ զոհ են տալիս նաև հայերը: Թշնամին, բացի Շահ-բենտերյանի դիրքի գրավումից, հայերին ոչինչ անել չի կարողանում:

Ապրիլի 29—30-ին շարունակվում են կոփվներն ու ուժբարկոծումները, բոլոր ուղղություններով: Այգեաստանի գլխավոր պողոտան հաշ փողոցն էր, որի մի պատը թուրքերի ձեռքումն էր գտնվում և հայերը գրավում են այդ պատը: Թուրքերը ապրիլի 30-ին ուժեղ հարձակում են գործում հաշ փողոցի օթելի դիրքի վրա, հայերը ետ են մղում այդ հարձակումը: Ապրիլի 29-ին թուրքերի թնդանոթների կրակը անձամբ ղեկավարում էին գերմանական սպաներ:

Ապրիլյան կոփվների ընթացքում զինմարմինը ձեռք է բերում փորձ և կազմում հարվածող ուժաձիգ թուղցիկ խմբեր, թույլ ու նեղ ընկած դիրքերին օգնության հասնելու համար, սկզբում այդ գործը կատարում էր շտաբը, բայց հետո կազմվում են կաթակ Առաքելի, Կարապետ Շատախյանի, Քյոմյուր Վարդանի և Զանթիկյանի խմբերը: Նվազախումբը նույնպես ուներ դպրոցական տղաներից կազմված զինված խումբ: Հետևաբար նա ոչ միայն նվազով ու երգերով էր ոգևորում հայ կռիվողներին, այլև գործուն զինական օգնություն էր ցույց տալիս թուլացած դիրքերին: Զինմարմինը ապրիլի 28-ի ահավոր կոփվների համար ցուցաբերած խիզախության համար պատվանշանով պարգևատրում է նազարեթ Բուռնուլյանին, Ռուբեն Հյուսյանին, Ոզմի Վարդանին, Մելիքսեթ էյնաթյանին և Պողոս Կոթոյանին¹³:

Ապրիլի 29—30-ին թուրքերը թեև կռվում էին, բայց նրանց մեջ սկսվել էր խուճապ: Թիմարի Ալյուր գյուղից մի հայ կին, որ գերի էր թուրքերի մոտ, մի կերպ փախչում է հայերի մոտ, հայտնում, որ թուրքերը խուճապահար փախչում են¹⁴: Ապրիլի 30-ին Տոնի գյուղի ասորի կանայք ու երեխաները լցվում են Այգեաստան. տղամարդկանց կոտորել էին: Այդ կանայք նույնպես հայտնում են թուրքերի ու քրդերի խուճապի մասին: Այսպես է անցնում ապրիլ ամիսը, գոյամարտի 24 եր-

կար ու ձիգ, ահավոր ու սարսափելի օրերը և Վասպուրականի քաջորդիները թևակոխում են մայիս ամիսը, որն իր հետ բերում է ոչ միայն զարնանային բուրմունք, այլև Վանի հայության ազատագրումը:

Մայիսի 1-ին Այգեաստանում կարևոր ղեկավար ու իրադարձություններ տեղի չեն ունենում:

Ապրիլի 29-ից սկսած թուրքերը նահանջում են Ավանց գյուղի նավերով ղեկավար տամետ, Ոստան և Դատվան: Խալի բեյի բանակը Սամաստում ջարդվելով ուսաներից, նահանջում է ղեկավար Բիթլիս, որովհետև Անդրանիկն իր խմբով աջ թևից մշտապես խփում, հարվածում է նահանջող բանակին և ջրում ղեկավար քրդական շերտը ու թույլ չի տալիս անցնելու հայկական շերտից, այսինքն Վանի վրայով: Ռուսները շուտով գրավում են Բաշկալեն: Ռուսական մի ուրիշ զորաբանակ Իգդիրի կողմից մոտենում է Բերկիրին և մայիսի 1-ին գրավում այն: Ռուսական այս երկու զորաբանակների հետ էին հայ կամավորական խմբերը:

Վուսակալը հրամայել էր թուրքերին նահանջել, բայց մայիսի 2-ին կոփվները խիստ ուժեղացնում են, նահանջը քողարկելու համար: Նա քաղաքը շրջա կողմից ուժեղացնում է թնդանոթներով: Բայց մայիսի 2-ից 3-ի գիշերը թուրքերը կառքերով և սայլերով փախչում են քաղաքից:

Մայիսի 3-ը Վանի ապրիլյան կոփվների վերջին հերոսական օրն էր, որը դարագլուխ է կազմում Վանի հայ ժողովրդի պատմության մեջ. այդ օրը նրա պայքարի, հաղթանակի ու փրկության վերջին օրն էր: Բայց նա այդ ջգիտներ և շերտ գուշակում: Մայիսի 3-ին Հաջի Բեքիրի, Կլոր-դարի, Սահակ բեյի փոսի և Հանկույսների թնդանոթները կատաղություն մեծ ուժով են Այգեաստանը: Թուրքերը ուժեղացնում են պարտություն պարտության ետևից կրելով, փորձում են ամբողջ ուժը թափել Վան քաղաքի վրա, դրա համար էլ անվերջ ուժեղացնում էին հայերի դիրքերը: 12 թնդանոթներ բոլոր կողմերից կրակ են բացում, միայն ամերիկյան շենքերի վրա մի քանի ժամվա մեջ 26 ուժ են նետում: Թնդանոթներով ու հրացաններով աջ ու ձախ կրակում են խաղաղ բնակչության վրա և վիրավորում 30 մարդու: Արջը իր օրհասական մահվան ժամին ավելի կատաղի է դառնում: Բայց նույն օրվա ժամը 4-ից սկսած ուժեղ ուժեղացնում են հրացանաձգությունը մեղմանում, թուլանում և աստիճանաբար երեկոյան դադարում է: Շտաբը դիրքերից լուրեր է ստանում, որ թուրքերը երկու օրվա ուժեղ կոփվներից հե-

¹³ Վան-Տոսպ, Թիֆլիս, 1916, էջ 22—23:

¹⁴ Ա-դա, «Մեծ ղեկավար Վասպուրականում», էջ 351:

տո խուճապահար նահանջում են, Ռուբեն Հյուսիսային հայտնում է, որ Թուրքիա-կալի զորանոցը դատարկվում է, շտաբի պետ Արմենակ Եկարյանն անմիջապես մեկնում է այդ կողմը և խմբերի տղաներով երեկոյան կողմը հարձակվում են Հանկույսների զորանոցի վրա և թեթև կռիվից հետո գրավում և այրում են զորանոցը, որ ցցված էր Այգեմտանի գլխին: Ապա գրավում ու այրում են Թուրքիա-կալի գիտակետը: Հայերը այդ զորանոցից ձեռք են բերում մեծ քանակությամբ ուտելիք, հագուստ, հրացան, փամփուշտ, 2 թնդանոթ և մեծ թվով ռումբեր: Դրանից հետո զինամարմնի նախագահ Արմենակ Եկարյանը Ալես Պարսամյանի ու նրա ընկերների օգնությամբ, 80 կովոզ տղաներով, բաժանված երեք խմբի, կես գիշերին հարձակվում են Հաջի-Բեքիրի զորանոցի վրա ու չլաշարում այն և կարճատև կռիվից հետո գրավում են նաև այդ զորանոցը, մաքրում գիմադրողներից և այրում: Այնուհետև հրկիզում ու ոչնչացնում են նաև նրա կից եղած շենքերը, որոնք զորանոցի հետ միասին կազմում էին մի փոքրիկ քաղաք: Այդ զորանոցի գրավմամբ հայերը ձեռք են բերում ավելի շատ ուտելիք, հագուստ, ռազմամթերք, հրացան, 2 թնդանոթ, մեծ քանակությամբ փամփուշտներ ու թնդանոթի ռումբեր:

Արարքի դիրքերի տղաները հարձակվում են թուրքական թաղի վրա և գրավում Կլորդարը ու Շամիրամի մեծ թաղը: Կռիվներն ավելի ուժեղ էին խաչ փողոցի կողմում, բայց հայ մարտիկները կոտրելով թուրքերի դիմադրությունը, գրավում են Զեղեթի բնակարանն ու ռստիկանատունը: Փողոցներում տեղի ունեցած ուժեղ կռիվների հետևանքով, մայիսի 4-ի գիշերը Զեղեթն իր շքախմբով փախչում է: Մի խումբ հայ տղաներ Այգեստանից մտնում են քաղաքամեջ, գրկախառնվում ու համբուրվում են իրարից բաժանված հայ բնակիչները, ապա քաղաքամեջի հայ տղաների հետ գրավում են բերդը և զրոշակ տնկում նրա գլխին: Այդ զրոշակը հանդիսանում էր դարերով ստրկացած հայ ժողովրդի ցասման ու ըմբոստացման խորհրդանիշը:

Մայիսի 4-ի առավոտը, Զեղեթի փախուստից մի քանի ժամ հետո, խանդավառության լուսածագ էր հանդիսանում Վանի հայության համար: Այգեստանը ծխով էր պատած, թուրքական թաղերը այրվում էին, երեք օր շարունակ ծուխն ու բոցը բռնել էին ամբողջ քաղաքը: Վանի շրջակայքից մոտ 70 000 հայ գյուղացիներ, կողոպտված ու թալանված, լցվել էին Վան: Հայերն Այրում էին զորանոցներ ու ռազմական կետեր, որպես-

զի թուրքերը նրանց դիրքերը չգրավեին, այրում էին թուրքերի տները, որպեսզի նրանք նորից չվերադառնան իրենց տները: Վան քաղաքի թուրքերն այնքան արագ էին փախչել, որ չէին կարողացել հավաքել ճաշասեղանները, անկողիններում մոռացել էին երեսաներին, ծեղերին ու հիվանդներին:

Թեև Վան քաղաքը գրավել ու թուրքական մասը այրել էին հայերը, բայց դեռ ուսաներից որոշակի տեղեկություններ չունեին: Բողազ-քյասանցի Ավագը լուր է ուղարկում, որ Հաֆթա-դադի բարձունքների վրա մեծ բազմություն է տեսել, որ շարժվում է դեպի Վան: Բայց շուտով Տիրամեր գյուղի մի հայի միջոցով կամավորների ընդհանուր հրամանատար Վարդանից երկտող է ստացվում, որ ասված էր. «Արի կեցեք, մեկ օրեն ձեր մոտ կրլանք»¹⁵:

Այրիլյան մեկ ամսվա կռիվների ընթացքում Այգեստանում հայերը տալիս են 230 սպանված, որից կռիվողներ 145 հոգի և 10 կին ու երեխա, այս թվի մեջ չեն մտնում թուրքական թաղերում և բանտում սպանվածները: Համարյա նույնքան էլ վիրավորվում են¹⁶: Իսկ քաղաքամեջում սպանվում են 43 մարդ, որից կռիվողներ 15 հոգի, վիրավորներ 71 մարդ¹⁷: Ըստ զինամարմնի նախագահ Եկարյանի հաշիվների, թուրքերը Այգեստանի վրա մեկ ամսվա ընթացքում տարբեր տրամաչափի թնդանոթներից կրակել են ավելի քան 10 000 ռումբ¹⁸ և մի քանի տասնյակ միլիոն հրացանի գնդակ: Բայց այդ բոլորից հետո Այգեստանը մնում է կանգուն:

Հին պարսիկները Վանի նահանգն անվանում էին «Վասպուրական», որ նշանակում է «քաջորդիք» կամ «վեհորդիք», իսկ վերջնված մեկ ամսվա կռիվները ցույց են տալիս, որ նախնի քաջերի սերունդն իր ուժերը չի սպառել ու վերջացրել, նա դեռ ապրում է ու շարունակում իր նախորդների հերոսությունն ու քաջությունը: Այրիլյան մեկ ամսվա կռիվները միաժամանակ ապացուցում են, որ վանեցին իր նախնի վասպուրականացու հարազատ սերունդն է: Վանեցին մեկ ամսվա ընթացքում որսի հրացաններով, ատրճանակներով և մի քանի հարյուր տարբեր տեսակի հրացաններով, ոչ միայն դիմադրում է Կրուպի թնդանոթներին ու փրկում իրեն, այլև լուրջ վնաս է հասցնում կատաղած թշնամուն, «որովհետև հավատք իրենց կրճեքում բրոնզե պատեններ է կերտում և

¹⁵ Արմենակ Եկարյան, «Հուշեր», էջ 232:

¹⁶ Նույն տեղում, էջ 228:

¹⁷ Ա-դո, «Մեծ դեպքերը Վասպուրականում», էջ 364:

¹⁸ Արմենակ Եկարյան, «Հուշեր», էջ 229:

համերաշխ ու անձնվեր գործունեությունը հույսի առաջնորդող ջանքերը եղավ», — ասում է Փանոս Թերլեմեզյանը¹⁹:

Կամավորական խմբերի ընդհանուր հրամանատար Վարդանի երկտողից հետո, շտաբն անմիջապես պատրաստվում է ընդունելության: Եկարյանը և Արամը 20 հոգով ընդառաջ գնալով ռուսական բանակին, Վանի մոտ Շահբազի բլուրների վրա դիմավորում է դեպի Վան շարժվող ռուսական բանակի առաջապահ գնդին, գնդապետ Օզդիրի գլխավորությամբ և հայ կամավորական մի խմբի, դարաբաղցի խմբապետ Խեչոյի ղեկավարությամբ: Ապա այնտեղից շարժվում են դեպի ծխացող Վան և մայիսի 5-ի երեկոյան, երեքշաբթի օրը, մտնում են ազատագրված Վան քաղաքը: Իսկ ռուսական առաջապահ զորքը և հայ կամավորները, երբ մոտենում են Վանի դռներին, Ակուբի քարի տակ համարյա Վանի ամբողջ ժողովուրդը դուրս էր եկել նրանց դիմավորելու, ծաղիկներով ու ծաղկեփնջերով, գրկախառնվում ու համբուրվում են ռուս ազատարար զինվորների հետ: 60 000-ից ավելի մարդ էր դուրս եկել դիմավորելու այդ ազատարարներին: Դիմավորողների մեջ էին Վանի հերոս պաշտպաններ, գյուղացիներ, բանվորներ, արհեստավորներ, առևտրականներ, ուսանողներ, աշակերտներ, ուսուցիչներ, կանայք ու երեխաներ: Հազարավոր մարդիկ ցույցեր են կազմակերպում ի պատիվ քաջարի ռուսական զինվորներին, խանդավառություններ էին տեղի ունենում փողոցներում: Այդ ուրախությունների ու ցնծությունների տեսարաններն անընդելի են մնում վանեցիների և այդ ժամանակ քաղաքում գտնվողների հիշողության մեջ:

Մայիսի 6-ի վաղ առավոտյան Վան է մտնում Դրոյի խումբը, ապա նույն օրը քաղաք է մուտք գործում ռուսական բանակը գեներալ Նիկոլաևի հրամանատարությամբ: Ժողովուրդը նույն խանդավառությամբ, ցույցերով ու ծաղիկներով է դիմավորում ռուսական բանակին Ալեքստանի գլխավոր ու կենտրոնական խաչ փողոցում: Այստեղ էին եկել ոչ միայն խմբապետներն իրենց զինվորներով, այլև ղեկավարներ, առաջնորդը, վարդապետներն ու քահանաները և ամբողջ ժողովուրդը, մեծ ու փոքր, իսկ ճերմակ զգեստներ հագած օրիորդները ծաղիկներ էին ցանում ռուս զորավարի և նրա զինվորների գլխին, որպես իրենց ազատարարների: Այն դիմավորությունը, որ ցույց են տալիս հայերը ռուսներին խաչ փողոցի հրապարակի

վրա, Վան քաղաքն իր կյանքում այդպիսի ուրախություն և երջանկություն չէր տեսել: Ապա այդ խանդավառության մեջ ռուս զինեռալիս են հանձնում բերդի բանալիներն ու թնդանոթները: Դրանից հետո իրար հետևից Վան են գալիս Համազասպի, Քեռու, Վարդանի, Սեպուհի և մի քիչ ուշ Անդրանիկի կամավորական խմբերը: Այնուհետև գեներալ Նիկոլաևը իր շքախմբով ուղևորվում է Երամյանի դպրոցի մեծ սրահ, ուր հյուրասիրվում է ճոխ թեյասեղանով և մի ժամից հետո գնում է ռուսական հյուպատոսարան ու հաստատվում այնտեղ: Իսկ երեկոյան Թուրքմենյան Սիմոնի մեծ տան մեջ, Վանի հյուրասեր հայերը ճոխ ճաշկերույթ են տալիս ի պատիվ ռուսական բանակի ու հայ կամավորների, իսկ դա երախտահատուցում էր հայերի կողմից ազատարար ռուսական բանակին:

Ռուսական զորքերի ու հայ կամավորական խմբերի առաջխաղացումը կանգ չի առնում Վան քաղաքի ազատագրումով: Առաջ շարժվելով ու հետապնդելով նահանջող թուրքական զորքերին, մայիսի 10-ին ազատագրում են Փեսան դաշտը, որ Լևոն Շաղոյանի ղեկավարությամբ 40 օր շարունակ ինքնապաշտպանական կռիվներ էր մղում շարժարանների դեմ, իսկ մայիսի 12-ին ազատագրում են Շատախը, Թաղ կենտրոնով, որ 330 զինված տղաներով 42 օր հերոսական ինքնապաշտպանական կռիվներ էր մղում թուրքերի ու քրդերի դեմ: Ապա ռուսական զորքերի հետագա առաջխաղացման շնորհիվ, աստիճանաբար ազատագրվում են նաև Գավաշը, Կարճկանը, Մոկսը, Կարիսը, Սպարկերտը և այլ վայրեր: Դրանով էլ փաստորեն իթթիհադ կուսակցության հայաջինջ ծրագիրը Վանի նահանգում համարյա չի իրականանում և նահանգի հայ բնակչության մեծագույն մասը ինքնապաշտպանության շնորհիվ ազատագրվում է: Այսպիսով, 1915 թվականի Վանի ապրիլյան կռիվները փրկում են Վան-Վասպուրականի ու հարակից շրջանների ավելի քան 300 000 հայերի կյանքը և տապալում, առ ոչինչ համարում Թալեաթի հայաջինջ ծրագիրը Վանում:

Վանում ռուսական բանակի փայլուն ընդունելությունից հետո, հաջորդ օրը կազմրվում է ազատագրված Վասպուրականի կուսակցությունը Վան կենտրոնով: Ժողովուրդը շուտով ցրվում է իր տեղերը և լծվում շինարար աշխատանքի, թե՛ քաղաքում և թե՛ գյուղում: Վերաշինվում են ավերված ու հրդեհված տները, մաքրվում փողոցներն ու հրապարակները, բացվում են խանութներ ու արհեստանոցներ, վաճառատներ, վերա-

¹⁹ Արտակ Դարբինյան, «Հուշեր», էջ 324:

կանգնվում է շուկան, այն էլ ոչ թե քաղաքամեջում, այլ հաշ փողոցում, զավառներում ծավալվում են հրկրագործական աշխատանքներ, հետզհետե ձեռք են բերում անասուններ և հայ կյանքը վասպուրականում սկսում է եռալ։ Վանի Այգեստանը գնալով ճոխանում ու դառնում է արհեստների, առևտրի և ապրելու կենտրոն։ Հայը դարձյալ սկսում է ստեղծագործել ու արդյունագործել։

Վանի հերոսամարտը և հաղթանակը հանդիսանում են հայ ժողովրդի պատմության նոր շրջանի ամենափառավոր էջերից մեկը։ Վանի ինքնապաշտպանությունը պատիվ է բերում ամբողջ հայ ժողովրդին, այդ պատճառով էլ այդ հերոսամարտը անմոռանալի պիտի մնա ու պարծանքով պիտի հիշվի սերունդից սերունդ։

Սակայն ցարիզմը և ռուսական բարձր հրամանատարությունը հայերի այդ ձգտումները համարում էին իրենց համար վտանգավոր և 1915 թվականի հուլիսի 18-ին կազմակերպում են նահանջ։ Հուլիսի 18-ին վասպուրականի ժողովուրդը դուրս է գալիս իր հայրենի բնակավայրից ու բռնում գաղթի ճանապարհը, այն էլ անկազմակերպ ու տա-

րերայնորեն։ Վասպուրականցին վերցնում է մի քանի օրվա ուտելիք ու ոտքով ճանապարհ է ընկնում խուճապահար, թողնելով տունն ու տեղը, հարստությունը, ճանապարհին թողնում հազարավոր դիակներ և Արարատյան տոթակեզ դաշտում ցրված բազմաթիվ գերեզմաններ։ Այդ գաղթը վանեցու համար սոսկալի մի աղետ էր։

Վասպուրականի մեծ գաղթով կործանվում է ոչ միայն Վան-Վասպուրականը, այլև Արևմտյան Հայաստանը և սե վարագույրով է ծածկվում Թուրքիայի հայ ժողովրդի պատմությունը։

Այսօր, վասպուրականի մեծ գաղթից 50 տարի հետո, երբեմնի շեն ու հարուստ վասպուրականը համարյա ավերակ է, իսկ նրա աշխատասեր ու շինարար տաղանդավոր հայ ժողովուրդը ցրիվ է եկել աշխարհի տարբեր մասերում ու թափառական կյանք է վարում։ Միայն այն հատվածը, որ գտնվում էր Կովկասում, ազատագրվում է սովետական իշխանության կողմից և խաղաղ ապրում ու ստեղծագործում է, որովհետև սովետական իշխանությունը նրան բերեց դարերով կորցրած անկախությունը և ազգային վերածնունդը։

